

Բ.

ԻՐԱՒԱԲԱՆԱԿԱՆ

ՀԱՅԱԴԱՒԱՆՆԵՐԻ ԱՄՈՒՄՆԱԼՈՒԾԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ

ԵՒ

ՌՈՒՍԱՅ ԿԱՌԱՎԱՐԻՉ ՍԵՆԱՏՐ.

(Խնդրի տեսիլական լուծման եռերջր).

I

Ընթերցողին նախազգուշացնում եմ, որ այստեղ խօսք չպիտի լինի փաստացի կերպով այն պաշտօնական յարաբերութեանց և դրազրութեանց մասին, որ այս խնդրի շուրջը տեղի են ունեցել մի կողմից Հայոց Հայրապետների և Էջմիածնի Հայոց Սինոդի և միւս կողմից ներքին գործոց նախարարի և կառավարիչ Սենատի մէջ: Այստեղ մենք պիտի աշխատենք՝ յենուելով Հայոց եկեղեցու կանոնների վրա, ցոյց տալ այն իրաւական հողը, որը պէտք է լինի Հայոց Կաթողիկոսների այդ խնդրում բռնելիք դիրքի կուսանը: Փոխադարձ յարաբերութիւններն այսպէս են. ա. ամենայն Հայոց Հայրապետն իր իրաւանց սահմաններում ենթակայ չէ Կառավարիչ Սենատին: Բ. Կառավարիչ Սենատն իրր դատական վարչական մարմին, կայսրութեան ամենարարձր ատեանը լինելով, իրեն ենթակայ հիմնարկութեանց շարքումն ունի նաև ս. Էջմիածնի Սինոդը, որի նախագահը Կաթողիկոսն է: Այս վերջին փոխյարաբերութեան արտաքին պատկերը խնդրին ոչ տեղեակ ընթերցողին կարող է այն եզրակացութեան բերել, որ Կաթողիկոսը իրր Սինոդի նախագահ գոնեան, ենթակայ է Կառավարիչ Սենատին: Բայց դա, բարեբախտաբար, յամենայն դէպս այն խնդրի նկատմամբ, որ ներկայ մեր յօդուածի նիւթն է կազմում, այդպէս չէ: Բոլոր այն դատական-վարչական գործերը, որ ենթակայ են Հայոց Սինոդի կոմպետենցիային, կարող են թէ ըստ ձևի-պրօցեսսուալ խնդիրներում, և թէ ըստ էութեան—պետական օրէնքի դոգմայի խախտման հանգամանքներում, ասել է, կառավարիչ Սենատի վճռահատութեանը և վերահասութեանը հասնել: Այստեղ, սակայն, վէճը դրանում չէ, այլ մի ուրիշ բանում:

II

Հայոց Եկեղեցին լիապէս ինքնավար մի մարմին է, որ ունի իր 1600 տարուայ գոյութեամբ սրբազործուած մի սահմանադրութիւն: Այստեղ էականն այն չէ, թէ արդեօք այդ սահմանադրութիւնը գրաւոր է, թէ սովորոյթի իրաւունքի հիմամբ, աւանդուել է սերնդէ սերունդ՝ իբր մի անխախտ սկրունք: Թէ Հայոց Եկեղեցին ունեցել է այդ սահմանադրութիւնը և այժմ էլ անյողգող պահպանում է այն, դա տարակուսանքի առարկայ լինել չի կարող, դա դուրս է ամեն կասկածից: Բոլոր այն պետութիւնները, որ երբ և իցէ իրենց սահմաններում ունեցել են Հայաստանը կամ նրա մի մասը, ճանաչել են Հայոց Եկեղեցին իբր մի անկախ, ինքնավար հիմնարկութիւն: Նոյնն է եղել և Ռուսաց տիրապետութեան տակ: Այդ սահմանադրութեամբ, և Հայեր իրենց սահմաններում ունեցող պետութիւնների օրէնքով և սովորոյթով ընդունուած կարգերով, էջմիածնի Կաթողիկոսը ճանաչուած է գլուխ բոլոր երկրներում դառնող Հայերի և հայ Եկեղեցիների հոգևոր գործերի և հիմնարկութիւնների:

Այդ սահմանադրութեամբ, Հայոց Եկեղեցու տէրն և տնօրէնը ազգային ժողովն է. նա է Եկեղեցու օրէնստուն, նրանից բարձր մի հիմնարկութիւն չկայ, ինչպէս և չկայ նրանից բարձր մի իշխանութիւն՝ Հայոց Եկեղեցու համար, դրա հետ միասին և Հայոց Կաթողիկոսի համար, երբ խնդիրը վերաբերում է իրեն, բուն Եկեղեցուն և նրա համար սահմանուած ոչ միայն կարգերին և կանոններին, այլ նաև, որ ամենազլխաւորն է՝ դաւանութեան:

Սոքա անյողգող և դարերով սրբազործուած սկզբունքներ են, որ եթէ հանրածօթ են, յամենայն դէպս, ոչ միայն տեղին է յիշել, երբ նա յարաբերութիւն ունի մեր արծարծելիք խնդիրների հետ, այլ նաև նրա համար, որ այս սկզբունքները միշտ պիտի աչքի առաջ ունենան Հայրապետից սկսած Եկեղեցու մինչև վերջին ծխականը: Այս հիմնական խնդիրներին դեռ առիթ կուրենանք յետագայում դառնալ:

III

Այսպէս ուրեմն, Հայոց Եկեղեցին կառավարւում և ղեկավարւում է իր կարգերով և կանոններով. այդ սկզբունքը տեղ է բռնել նաև պետական օրէնքների ժողովածուի XI հ. 1 մասում, յօդ. 1117 (հրատարակութիւն 1910 թուի):

Մինչդեռ Ռուսաստանում դառնուած թէ պետական Եկեղեցու դաւանութեան և թէ այլադաւան Եկեղեցիների համար օրէնսդր-

քերի մէջ կան յատուկ գլուխներ, որոնցով օրինական նորմերի են ենթարկուած այդ եկեղեցիների դաւանութեան պատկանող ժողովուրդների ամուսնական և ամուսնալուծական կարգերը, նոյնը չենք գտնում հայադաւանների համար: Մինչդեռ նոցա եկեղեցիներում ընդունած իրաւանորմերը մանրամասն, յօդուած առ յօդուած յիշուած են, մեր—Հայոց եկեղեցու համար XI հ. I. մասում ընդհանուր խօսքով է ընդունուած, որ, ինչպէս վերն առաջինք, Հայոց եկեղեցին կառավարուած է իր կանոններով: Սրանից պարզ է, որ ինչ խնդիրներ և ծագեն, լուծողն այդ եկեղեցու կանոնն է և ոչ այլ ոք:

Նոյնն է և ամուսնալուծական գործերում. այստեղ էլ, երբ որ և է խնդիր պիտի լուծուի, դրա լուծողը լինելու է եկեղեցու ժողովներով ընդունուած կանոնը և ոչ թէ պետական որ և է օրէնք: Դժբախտութիւնը նրանումն է, որ Հայոց եկեղեցու համար յատուկ սահմանուած Положеніе-ի մէջ մեր եկեղեցու ժողովների սահմանած ամուսնալուծական կանոնները մուտք չեն գտել: Դրա ամենահաւանական բացատրութիւնը պէտք է գտնել նրանում, որ իրենց, այդ օրէնսդրական ակտը կադմոդների, ինչպէս և ժամանակի էջմիածնի վարիչների համար պարզ չէ եղել, թէ որոնք են այդ կանոնները: Սա դարմանալի չպէտք է թուի. դա ապացուցուած է մի շատ ակնյայտի փաստով.—Սինօդի և կոնսիստորեաների հիմնման հէնց սկզբներից, երբ այդ ատեաններն են մտել ամուսնալուծական գործեր, այդ ատեանները, ինչպէս այդ ցոյց են տալիս նոցա դիւանների հին գործերը, որոնել են կանոններ և օրէնքներ՝ հիմնաւորելու իրենց որոշումները տուեալ գործերի մասին: Այդ հիմնաւորման մեջ առաջին տեղն են բռնում «0րէնք պետական X հատ. I մ.»։ Իսկ այդ հատորի առաջին մասի առաջին բաժնի, առաջին գլխի յօդուածները վերաբերում են Թուսանայերի ամուսնութեան եւ ամուսնալուծութեան կարգերին: Այդ հանդամանքը հէնց շեշտուած է օրէնքի այդ բաժնի վերնագրում ուր կարդում ենք.—

X հատ. I բաժ. I գլ. О бракахъ между лицами православною веровѣданія, (ст. ст. 1—60). Սրանից պարզ է, որ Հայոց եկեղեցու հիմնաւորիչներ Թուսադաւան եկեղեցու համար սահմանուած կանոններ ընդհանուր պետական օրէնք նստուելով, իրենք էլ սկսել են զեկավարուել դրանով: Դրութեան այս պատկերը չի կարելի տեսլ, որ գեղեցիկ է և խրախուսելի և որը կարելի է բացատրել արածի նկատմամբ պարզ դիտակցութեան բացակայութիւնով: Միայն անմեղ անդիտութիւնը կարող էր ուստական եկեղեցու կանոնը՝ մեր եկեղեցու մէջ գործադրութեան հանել՝ իբր պետական օրէնք:

IV

Ամուսնալուծական գործերի համար կոնսիստորիաները ներկայանում են իբր ատալին ինստանս: Պօլոժենիայի 1188 յօդուածով այդ գործերը պէտք է վերջնական այդ ատեաններում: Նրամի այլ—1142 յօդուածով Սինօդը վերջնական լուծումն է տալիս ամուսնական խնդիրներին բողոքարկութեան դէպքում: Այս հիմամբ, եթէ մէկի գործը կոնսիստորիայում լուծւել է, ու նա բաւական չէ, կարող է օրէնքի սահմանեալ ժամանակամիջոցում գործն անցնել էջմիածնի Սինօդ (въ апелляционном порядке): Արդ, եթէ կողմերից մէկը Սինօդից—երկրորդ ինստանսից—դժգոհ լինի, ում պիտի դիմէ վճարէկ խնդրով (кассация): Ահա այստեղ է, որ խնդիրը բարդւում է, և ծագում իրաւասութեան kasus. ըստ իս, այդտեղ իսկապէս kasus-ի խնդիր չկայ, նա շատ պարզ է: Այդ պարզութիւնն ակնբախ անելու համար դիմենք խնդրի վերլուծմանը:

V

Մի նորութիւն ասած չեմ լինի, եթէ այստեղ, անհրաժեշտութեան պատճառով, կրկնեմ, որ պետական օրէնքների բացատրութեան իրաւունքը պատկանում է պետութեան բարձր դատական—վարչական ատեանին—Ռուսաց Կառավարիչ Սենատին: Սա էլ հէնց, մեր խնդրի լուծման աղբիւրն է. այսինքն Սենատի այս իրաւունքից կամ իրաւասութիւնից էլ բղիւլու են այն հիմունքները, որոնցով պիտի լուծուին մեր ատալադրած խնդիրները, ասել է, այն հիմունքները՝ որոնցով և պիտի ղեկավարուել հայադաւանների ամուսնալուծական գործերի վերջնական կարգադրութիւնն անելով:

Կառավարիչ Սենատը վերջին երեք տասնեակ տարիներում միջամտել է մեր եղեղեցու ամուսնալուծական գործերին երկու ձևով:—Նախ, նա պահանջել է, որ Պօլոժենիայով սահմանուած կարգը պահպանուի, այսինքն ամուսնալուծական խնդիրներն իրենց լուծումն ստանան Կոնսիստորիաներում, ու վերջնական լուծումն՝ եթէ կողմերի և ոչ մէկը դժգոհ չեն նրա—Կոնսիստորիաների վճօից: Սա միանգամայն արդարացի է և հիմնաւոր: Սենատի այս օրինական պահանջի հետ համաձայն չէ էջմիածինը, և այդ այն գլխաւոր պատճառով, որ պրօցեսսուալ խնդիրների մասին այնտեղ պարզ հասկացողութուն չկայ: Այնտեղ տրագիգիական այն կարգն է իշխող, որ դատական (առ այժմ կասեմ) բոլոր գործերի վերջնական որոշումը դրուի էջմիածնի Սինօդում:

Երկրորդ, նա—Կառավարիչ Սենատը—միջամտել է ամուսնալուծական խնդիրներին՝ ըստ էութեան, մի քանի դէպքերում

Բեկանելով արդէն կատարուած որոշումները, Այստեղ նա անցել է իր իրաւասութեան սահմաններից, քանի որ Հայոց եկեղեցու կանոնների նկատմամբ, նա այդ կանոնների դօգման բացատրելու իրաւունքը չունի և չի էլ կարող ունենալ:

VI

Հայոց եկեղեցին, իր դարաւոր սահմանադրութեան հիմամբ, առաջ է քերել և ճանաչում է մի նիւնարկութիւն. որ եկեղեցու սահմանաժ կանոնների ոչ միայն պահող պահպանողն ու գործադրողն է, այլ նաեւ նոցա բացատրողն ու այդ առիւ իր ստորադիր նիւնարկութիւնների նրանանգողը: Այդ հիմնարկութիւնը Հայոց Հայրապետութիւնն է, այսինքն իւրաքանչիւր տւեալ ժամանակի համար՝ ամենայն Հայոց կաթուղիկոսը: Դա նրա մեծագոյն իրաւունքը և նոյնքան ծանր պարտականութիւնն է:

Սկնատը, երբ, ենթադրենք, մի ամուսնավուծական գործ էջմիածնի Սինոդից ստանայ կողմերից մէկի վճարէկ բողոքի հիման վրա, երկու դէպքումն էլ, այսինքն և վճարէկ բողոքին բաւարարելու դէպքում՝ օրէնքի դողմայի տեսակէտից, և վերահասութեան (ԲԱՃՅՕՐԵ) դէպքում, ուր կարող են շոշափուել և դողմատիկ պրօցեսսուալ խնդիրներ, կրկնում ենք, երկու դէպքումն էլ կանգնելու է մի մեծ դժուարութեան առաջ: Երկու դէպքումն էլ նա կոնսիստորիայի կամ էջմիածնի Սինոդի վճիռները վերահասութեան ենթարկելիս կամ վճարէկ որոշումն տալիս, հարկադրուած պիտի լինի վերոյիշեալ ատեանների վճիռներին հիմք ծառայող կանոններին դիմել: Զուտ պրօցեսսուալ խնդիրները հեշտ են, նոքա շատ առարկութիւն չեն կարող վերցնել: Այստեղ խնդիրը վերաբերելու է նրան, թէ արդեօք դուտ ըստ ձևի (Formel) դատավարութիւնը տարուել է կանոնաւոր, թէ ոչ: Թէև մեր ամուսնավուծական գործերի համար դատավարական յատուկ կարգեր և հրահանգութիւններ չկան, բայց բնական է, որ մեր թէ քննիչները և թէ վճիռ կայացնող ատեանները պարտաւոր են ղեկավարուել ընդհանուր հիմունքներով: Այդ հիմունքները դժուար չէ գտնել համապետական օրէնքների մէջ:

Վճռարէկման խնդրում, ինչպէս և ձեռական խնդիրներ լուծելու գործում, որքան և խիստ ձեռական լինի մի հարց, կան և կլինին դէպքեր, որ առարկան, էութիւնը, դժգոհման դժուար է տարրերել ձեռականից և դժուար է խուսափել նրանց մերձենալու թէ մի օրէնք հիշտ չէ դործադրուել ըստ ձևի, ասել է նա խախտուել է որոշ չափով նաև ըստ էութեան, կամ կարող է խախտուած

լինել նաև ըստ էութեան: Այսպէս.— Կողմերից մէկը մեղադրում է միւսին, վարակիչ մի հիւանդութեան համար, քննութիւնն ապացուցում է, որ վարակիչ այդ հիւանդութիւնը անառակութեան արդիւնք է, բայց քննութեան մէջ պակասում է բժշկի վկայութիւն: Հայոց եկեղեցու կանոններով և՛ անառակութիւնը՝ ամուսնական անհաւատարմութիւնը, և՛ վարակիչ հիւանդութիւնները կարող են հետեցնել ամուսնալուծութիւն: Պետական օրէնքները (Ռուս եկեղեցու կանոնները պէտք է հասկանալ այստեղ) վնասեցնում են և այլ վարակիչ հիւանդութիւններ իբր ամուսնալուծութեան պատճառ չեն կարող նկատուել: Գործը կողմերի բողոքի հիմամբ անցնում է Սենատ, որ գտնում է, և կգտնի անշուշտ պրօցեսսուալ սխալ ըստ ձևի, 1) որ բժշկի վկայութիւն չկայ, 2) որ վնասեցնող կամ այլ վարակիչ հիւանդութիւնները չեն կարող ամուսնալուծութեան պատճառ լինել: Ինչպէս տեսնում էք, ըստ ձևի են այս նկատումները, բայց ըստ ձևի խնդրի այս լուծումը կարելի է ասել, որ չի շօշափում նաև ըստ էութեան կամ օրէնքի գօղմայի՝ հարցեր: Որից պարզ է, որ եթէ Սենատը հիմնուելով գործի ըստ ձևի սխալների վրա ու եղած վճիռը բեկանի, նա խախտած կլինի և գօղման: Այդ դեռ բաւական չէ, այսպիսի դէպքում կառավարիչ Սենատը հանդէս կգայ և՛ Հայոց եկեղեցու կանոնական խնդիրների ըստ էութեան իբր բացատրող և թոյլատրելին ու ժխտելին որոշող:

Բայց կարող է պատահել նաև դուռ ձևական խնդիր. այսպէս.— Կողմերից մէկը տուել է ամուսնալուծական խնդիր. քննութեամբ հաստատուել է մեղադրանքը, առաջին ատեանը— Կոնսիստորիան կայացրել է վճիռ, որն և յայտնել է կողմերին: Կողմերն իրաւունք ունին դո՛ւ կամ դժգո՛հ լինել լուծման հետեանքից. այդ նրանց դործն է: Մի յայտնի այսպիսի դէպքում, բողոքող կողմը որի օգտին Կոնսիստորիայի վճիռն է կայացել, տալիս է մի ստորագրութիւն, որ վճիռը լսել է և դժգոհութիւն յայտնում, որ մեղաւոր կողմի պատիժք քիչ է և այդ հիմամբ դործն անցնելով Սինօդ ոչ միայն դժգոհում է վճռի դէմ, այլ և երկրորդ ինստանցիայում, Սինօդում, իր ամուսնալուծական խնդիրը ետ է վերցնում, ասելով, որ այլ ևս չի ուզում բաժանուել: Սինօդը դործն առանց ըստ էութեան նայելու, մեղադրող այդ կողմի խնդրի հիման վրա գործը կարճում է:

Իւրաքանչիւր քաղաքացիական դատական գործի մէջ հնարաւոր է, որ կողմերը գործը հաշտութեամբ վերջացնեն, նոյն իսկ եթէ վճիռը կայացել է. բայց դա արդէն դատարանի գործը չէ, այլ դատարանից դուրս՝ կողմերի գործն է: Բայց ամուսնալուծական գործերում այգպիսի մի հաշտութիւն դուրսը կայանալուց

յետոյ կողմերը պէտք է Հոգևոր պատշաճ իշխանութեան յայտնեն, որ իրենք հաշտուել են. և այդ նրա համար, որպէս զի պսակն իր դօրութեան մէջ մնայ և ճանաչուի: Մեր ակնարկած այդ գործի մէջ դատարանի վճռից յետոյ կողմերի հաշտութիւն տեղի չէ ունեցել. մեղադրող կողմը մինչև դատական առաջին վճիռը՝ իր տուած խնդիրը ետ չէ վերցրել: Արդ, Սինօդն այս դէպքում թնչ պիտի անէր. պարզ է, որ նա պէտք է բողոքարկու խնդիրը քննէր գործի հետ միասին և Կոնսիստորիայի վճիռը կամ հաստատէր և կամ բեկանէր: Բայց նա—Սինօդն այդպէս չէ արել: Նա գործն հաշտուել է կարճուած:

Այս բոլոր ասածիցս շատ պարզ է, որ պրօցեսուալ խնդիրներ հասկանալու պակասի պատճառով, Սինօդը այդպիսի մի գործի մէջ արել է սխալ: Եթէ այդ կամ համանման գործեր վճարէկ բողոք մտնին կառավարիչ Սենատ, վերջին գործին նայելով զուտ պրօցեսուսի հիմունքներով, պէտք է անպատճառ բեկանէ Սինօդի վճիռը և առաջադրէ՝ գործը քննել ըստ էութեան:

Արդ, եթէ պրօցեսուսի մասին մեր հասկացողութիւնը պակասաւոր է, երբ մենք ուսսագաւան եկեղեցու կանոնները գործ ենք ածում իբր «Օրէնք պետականք» ու դրանով ստեղծում մի դրութիւն, որ հիմք և իրաւունք ենք տալիս կառավարիչ Սենատին միջամտել մեր ներքին գործերին, ո՞վ է մեղաւոր: Մեղաւոր, ի հարկէ, չկայ, բայց կայ տասնեակ տարիների հնութիւն իր մէջքի վրա ունեցող մի տգիտութիւն, որի ժառանգութիւնը դրատեցի-այով անցել է և մեր ժամանակներին: Ռուսագաւան եկեղեցու համար սահմանուած կարգը հայ եկեղեցու մէջ գործադրելը ծնունդ է այդ տգիտութեան, որի հմայքից չեն ազատուել և յետագայ մի շարք սերունդներ՝ մինչև մեր օրերը:

VII

Կառավարիչ Սենատը, շատ բնական կլինէր, եթէ ունենար իր ձեռքի տակ Հայոց եկեղեցու համար ժողովներով սահմանուած կանոնները, կարող էր վճարէկ բողոքի ժամանակ խնդիրն ըստ էութեան լուծելիս, դիմէր այդ կանոններին, և ըստ ձևի բէկանէր վճիռը՝ դառնելով այն անհամապատասխան մեր եկեղեցու կանոնական կարգերին: Այդ բանը գոյութիւն չունի, բայց գոյութիւն ունին որոշ, յայտնի, տանկի լինելու չափ պարզ ձևակերպուած ազդային կանոններ: Այդ կանոններով ամուսնութիւնը լուծելի է հետևեալ պատճառներով. —

1. Ամուսնական անհաւատարմութիւն.
2. Ամլութիւն.
3. Մարմնական և հոգեկան արատներ.

4. Արքեպիսկոպոսութիւն.

5. Անհաշտ քնաւորութիւն (կախ, ծեծ, և այլն).

(Տես Շահապիվանի 447 թուի ազդային ժողովի կանոնները¹,
կանոն Գիրք Հայոց, եր. 63—66).

Խուսաց եկեղեցին սրանից միայն առաջին հիմունքն է ճանաչում. արդ, երբ որ և է գործ քնայ կառավարիչ Սենատը, և որն իւր հիմքումն ունենայ ամուսնալուծութեան միւս պատճառները, Սենատն ինչպէս պէտք է լուծէ խնդիրը, եթէ նա միանգամայն անտեղեակէ Հայոց եկեղեցուց ճանաչուած այդ հիմունքին: Թէ Սենատն այդ տեսակ դոգմատիքական խնդիրներում խառնուելիք չունի, դա երևում է ուստի օրէնսդրի ընդունած այն հիմունքով, որ մտել է Положение-ի մէջ, ուր 1117 յօդուածում ամենայն Հայոց Պատրիարք կաթողիկոսին է վերապահւում Հայոց եկեղեցու կանոնների և ձևերի նիստ կատարումը:

Սրանից շատ պարզ է այն դիրքը, որ պէտք է բռնէ կառավարիչ Սենատը. — նա, կամ պէտք է իւրաքանչիւր վճռարէկ խնդիր ուղարկէ ամենայն Հայոց Հայրապետին, հարժարուելով որ և է միջամտութիւնից Հայոց եկեղեցու ամուսնական կարգերի դոգմատիկական խնդիրներում, և կամ ամեն այդպիսի վճռարէկ բողոքի դէպքում պէտք է դիմէ դոգման բացատրող միակ իշխանութեանը՝ ամենայն Հայոց կաթողիկոսին: Բացի սրանից մնում է նաև մի այլ ճանապարհ. — օրէնքների ժողովածուի մէջ ընդունել այն իրաւանորմերը, որ կազմում են Հայոց եկեղեցու ամուսնալուծական իրաւունքի հիմունքը:

Ճանապարհներից այս վերջինը, ասել հարկաւոր չէ, որ ամենից լաւն է. բայց դա շօշափում է Положение-ի փոփոխման խնդիրը, որ ներկայ մեր խորհրդածութեանց նիւթ չի կարող ծառայել, ուստի և թողնում ենք:

Մնում է այն դրութիւնը, ինչ որ օրէնքով նախատեսանուած է. իսկ այդ օրէնքը, մենք տեսանք, նա մեր խնդրի լուծման միայն երկու ճանապարհ է թողնում: Ճանապարհներից երկրորդը — այիսնքն իւրաքանչիւր տուեալ դէպքի համար հայկական կանոնների դոգմայի բացատրութեան համար կաթողիկոսին դիմելը հակասում է Սենատի իրաւական դրութեանը: Ինքն, օրէնք բացատրող բարձր դատական-վարչական մարմին լինելով հանդերձ, չի կարող պետութեան մէջ մի ինքնավար մարմնի դիմել՝ որոշ հրահանգութիւններ, բացատրութիւններ՝ ստանալու համար: Խնդրի այս ձևի լուծմամբ Հայոց Հայրապետութիւնը դառնում է պետական մի բարձր դատական-վարչական մարմնի հրահանգող-

1. Մեր հրատարակութիւն. 1914 թ. Թիֆլիս.

ղեկավարող: Դա անթոյլատրելի է: Սենատը մի ընդհանուր ղեկավար պիտի ունենայ—օրէնքը:

Մնում է խնդրի լուծման առաջին, ըստ ամենայնի օրինական, ձևը: Այսինքն—ամեն մի կասսացիայի գէպքում խնդիրն ուղղուի ամենայն Հայոց Կաթողիկոսին: Այլ կերպ ասած, Կաթողիկոսը լինելով Հայոց եկեղեցու կանոնների պահպանողն ու գործադրելու վրա հսկողը, նա էլ ունի իշխանութիւն նայելու, թէ արդեօք ազգային կանոնների դօգման այս կամ այն գործում ճշգրիտ կիրառումն ունեցել է: Իսկ այս բոլորն յանգել է տալիս մի հիմնական եզրակացութեան, այն է, որ բոլոր այն գէպքերում, երբ իրաւախախտումն է առաջ եկել՝ իբր հետեանք Հայոց եկեղեցու կանոնների ոչ համապատասխան կիրառման, վճարէկ բողոքը պէտք է տրուի Կաթողիկոսին:

Այստեղ կայ մի լուրջ առարկութիւն, այն է, որ Հայրապետը էջմիածնի Հայոց Սինոդի նախագահն է: Այս առարկութիւնը նշանակալից է. այսինքն անթոյլատրելի է, որ մի ատենի նախագահը լինի նաև նոյն ատենում (իբր երկրորդ ինստանցիայ) վճռուած գործերի համար՝ վճարէկ հիմնարկութիւն: Եթէ չասեմ, որ օրէնքն ինքը, նախատեսելով այդ հանգամանքը, ընդունել է այդ երկութիւնը (1117 յօդուած):—Կաթողիկոսը Սինոդի նախագահութիւնից դուրս է նաև որպէս ընդհանրական Հայրապետ՝ ունենալով աւելի բարձր իրաւունքներ և իշխանութիւն, միայն իրեն, իբր եկեղեցու ղլխին, վերադահուած գործերում: Այդ գործերում նա իրեն է ենթարկում ամբողջ եկեղեցին և նրա հիմնարկութիւնները: Կրկնում եմ, եթէ այս հանգամանքներն էլ չլինէին, դժուար չէր այնպէս անել, որ մեր եկեղեցու կանոնների դօգմայի, այսպէս օրինակ ամուսնալուծական գործերում, եկեղեցու ղլուխը չմասնակցէր վճիռներին իբր նախագահ: Սա կտար այն առաւելութիւնը, որ վճարէկ խնդիրների գէպքում Հայրապետն առաջ կգար իր հեղինակաւոր խօսքն առելու, թէ արդեօք Սինոդն իր վճիռներում ճիշտ կերպով ղեկավարուել է Հայոց եկեղեցու կանոններով: Սրանով էլ կվերջանար այն ԿԱՏՈՒՆ-ը, որի մասն մենք վերն ասացինք, ու վերջ կտրուէր Ռուսաց Սենատի մեր եկեղեցու կանոնների գործադրութեան միջամտութեանը մինչի այն ժամանակ, քանի որ ամուսնալուծական գործերն առհասարակ հոգեւոր վարչութեանցն են ենթակայ:

Մեր խօսքը վերջացրինք, ու մեզ թւում է, թէ խնդիրը բաւարար չափով լուսարանեցինք, որն և մեր մերձակայ նպատակն էր:

Արսէն վարդապետ.